# Նոյան Տապան

30.09.2011 | 19:17

## Տիգրան Սարգսյանը մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանի 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը սեպտեմբերի 30-ին կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի ուղեկցությամբ մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանի 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:

ՀՀ կառավարության անունից շնորհավորելով ներկաներին բուհի 20-րդ տարեդարձի առթիվ՝ վարչապետ Սարգսյանը մասնավորապես նշել է. «Այն, որ մենք մեր պետության անկախության 20-ամյակը համադրում ենք Հայաստանի ամերիկյան համալսարանի 20-ամյակի հետ, ունի հետեւյալ խորհուրդը. ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մեր անկախ պետականության ամրապնդման հիմնական գործիքը պետք է լինի գիտելիքը: Ուրախ եմ, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում ունենք Ամերիկյան համալսարան, որը20 տարի մեզ հետ միասին փորձություններով է անցել եւ այսօր մշակում է իրզարգացման նոր արդիական ծրագիր: Ամերիկյան համալսարանը պետք է ընդլայնվի, նրա գործառույթները պետք է դառնան ավելի բազմազան, ծառայությունները պետք է հասանելի լինեն մեր երիտասարդների համար: Սա է ժամանակի պահանջըեւայն խնդիրը, որ կառավարությունն այսօր դնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի առաջ: Գիտելիքնէ ժամանակակից աշխարհի պահանջը, եւ մրցունակ են այն ազգերը, որոնք հասկանում են դա, զինվում են գիտելիքով եւ արտադրում նոր գիտելիք: Համոզված եմ, որ Ամերիկյան համալսարանը շարունակելու է այդ առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում»:

Վարչապետը գոհունակություն է հայտնել առ այն, որ Հայաստանի Ամերիկյան համալսարանն ունի Միացյալ Նահանգների արտոնագիր, ինչը վկայում է, որ այն այսօր գործընթացներն իրականացնում է ԱՄՆ-ումընդունված չափանիշներին համապատասխան: Ընդգծելով, որ տարածաշրջանում ՀայաստանիԱմերիկյան համալսարանի առկայությունը մեր երկրի հարաբերական առավելություններից է, կառավարության ղեկավարն ասել է. «Մենք պետք է լրացուցիչ ջանքեր գործադրենք համալսարանի գործառույթների ընդլայնման առումով՝ հասկանալով, որ ապագա մրցակցության մեջ մենք կարող ենք հաղթել՝տաղանդաշատ երիտասարդներինկրթելով»:

Այնուհետեւ Տիգրան Սարգսյանը հանդիպել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին եւ ուսանողներին: Վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբՀայաստանի Ամերիկյան համալսարանի հիմնադրման 20-ամյակի առթիվ եւ կրթության ու գիտության բնագավառներում ներդրած ակնառու ավանդի համար ՀՀ պետական ճարտարագիտական համալսարանի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետի պրոֆեսոր, «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Յուրի Սարգսյանը պարգեւատրվել Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով:

Տեղեկանք. Հայաստանում ամերիկյան կրթական համակարգի օրինակով մագիստրոսի կոչում շնորհող համալսարանը հիմնադրվել է 1991 թ. սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ: Համալսարանի հիմնման նպատակն իրականացել է ՀՀ կառավարության եւ ԱՄՆ-ի երկու խոշոր հաստատությունների՝ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) եւ Կալիֆոռնիայի

համալսարանի աջակցությամբ: Վերջինս արժեքավոր փորձագիտական օգնություն է ցույց տվել համալսարանին՝ դասախոսական կադրերով ապահովման եւ համագործակցության ծրագրերի զարգացման հարցերում:

Համալսարանի հիմնադրման նպատակը տարածաշրջանում բարձրագույն կրթության ամերիկյան համակարգին եւ չափանիշներին համապատասխան կրթության եւ հետազոտական աշխատանքներ կատարելու հնարավորություն ստեղծելն է: Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, Հայաստանի ամերիկյան համալսարանն իրականացնում է կրթական, հետազոտական ծրագրեր եւ ծառայություններ: